# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՌԻՓՍԻՄԵ ՍԱՐԿԱՎԱԳՈՒՀԻ ՍԱՍՈՒՆՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՐԵՇՆՈՐՀ ՄԱՅՐ ՀՌԻՓՍԻՄԷ ՍԱՐԿԱՒԱԳՈՒՀԻ ՍԱՍՈՒՆԵԱՆ, ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐՔԻԱ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1700-ամեայ Լոյս Խորանից Հայրապետական ողջոյն եւ օրհնութիւն ենք յղում Ձեզ Քրիստոսասէր ու բարեգործ Ձեր կեանքի յիշարժան փառեղարծի՝ Կրօնաւորուհեաց յապուկ քող ստանալու 50-ամեակի առիթով, որի մասին տեղեակ դարձանք Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի միջոցով:

Ուրախութիւն է Մեզ համար գնահատանքի գիր ուղղել Ձեզ՝ հաւաստելով, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում հայուհու ծառայանուէր առաքելութեան պայծառ օրինակ են Ձեր ապրած 50 տարիները, այն օրից ի վեր, երբ խորին խոնարհումով, Աստուծոյ առաջ սուրբ ուխտով ստացաք կրօնաւորութեան յապուկ քողը՝ ձեռամբ երանաշնորհ Գարեգին Ա Պատրիարքի:

Գալֆայեան Տան յարկից ներս Դուք նուիրուեցիք երեխաների խնամքի եւ կրթութեան ազնուագոյն կոչմանը, դառնալով շարունակողներից մէկը հոգելոյս Սրբուհի Մայրապետի մարդասիրական մեծ աւանդի եւ հաւատով զօրացեալ առաքինազարդ ու արի ոգու: Յանձն առած բոլոր պաշտօնները Դուք իրականացրել էք առ Տէրը եւ մեր Սուրբ Եկեղեցին անմնացորդ սիրով ու նախանձախնդրութեամբ՝ բարի պտուղներ բերելով եկեղեցական մեր կեանքում: Ձեր հաւատաւոր հոգու եւ հուսառատ ջանքերի արգասիքն է նաեւ «Թոշնոց Բոյն» մանկապանը Գայանեաց ուխտի հաստատումը: Ձեր ծառայութիւնների արդար գնահատանքով արժանացել էք լանջախաչ կրելու շնորհի եւ «Մայր»ութեան տիտղոսի, սակայն մեծագոյն պարգեւը, որ ունէք, Ձեր հոգածութիւնը վայելած, Ձեր մայրական սրտի համակ ջերմութիւնը զգացած հարիւրաւոր սան-սանուհիների՝ Ձեր զաւակների երախտագիտութիւնն է:

Բարեշնորհ սիրելի Սարկաւագուհի, բարձրօրէն գնահատելով Ձեր վաստակն ու ծառայութիւնները եւ սիրով ընդառաջելով Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մես-

րով արքեպիսկոպոս Մութաֆեանի միջնորդութեանը՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Թող շնորհեալ պարգեւը Ձեզ համար լինի հաւատի ու յոյսի նոր խրախոյս՝ զօրացեալ հոգով ու գոտեպինդ շարունակելու Ձեր ծառայութիւնը՝ ի շինութիւն եւ ի պայծառութիւն Կ. Պոլսի հայոց Պատրիարքութեան եւ Հայ Եկեղեցու:

Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ կեանքի երկար փարիներ եւ գործոց յաջողութիւններ:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 4-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 198